ՀԱՄԱԶԱՅԻՆ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

—o—

ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

I

Էրզրում, 20 հոկտ.

Այս երեկոյ, ընդ հովանաւորութեամբ նորընտիր պատրիարք Զարէն սրբազանի, կայացաւ երեկոյթ-ներկայացում՝ հայ գրերի գիւտի և տպագրութեան զոյգ յոբելեանների առթիվ։

Ներկայ էին պատրիարք հայրը, առաջնորդ Սմբատ եպիսկոպոսը, Գարեգին վարդապետը, ուրիշ վարդապետներ, քահանաներ և այլն։

Ներկայացվեց Նանթի «Հին Աստուածներից» միայն երեք պատկեր, տեղական այժերով։ Որպէս գաւառական բեմ, կարելի է գտնել շատ մեծ թերութիւններ թէ խաղի և թէ դերերի ըմբռնումների մէջ։ Դեկորացիան չափազանց աղքատ էր, ողորմելի աստիճան։ Այս բոլորից ջոկ, ժողովուրդը արդէն մի բան չը կարողացաւ հասկանալ, որովհետև, բացառութեամբ մի քանիսի, հանդիսականները երբէք էլ ծանօթ չէին պիէսայի նիւթին. և այդ իսկ պատճառով շատ անմիտ բան դուրս եկաւ ամբողջ կառուցածքից մի քանի բեկորներ միայն ներկայացնելը։

Տեղի ունեցան նաև երգեր, արտասանութիւններ, նուագ դաշնակի և ջութակի վրա երկու սիրողների կողմից։ Արդիւնքը՝ մօտ 30 ոսկի՝ յատկացված է Երիտ. Միութեան և Ազգանուէր Կանանց վարժարաններին։

Կ.

II

Մուշ, 16 հոկտ.

Անցեալ կիրակի, ամսոյս 13-ին, առաւօտեան ժամը 5-ին (ը. թ.) տեղւոյս ս. Մարմնէ մայր եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ հայ գրերու գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի լրանալու կը՛ին յոբելեաններու մեծ տօնը։ Հրաւիրուած էին յարանուանական հասատատութիւնների պաշտօնական և գրոցոցաւոր անձնաւորութիւնները։ Ներկայ էին Միացեալի և Հայաստեցի պաշտօնեաները իրենց տղակերտներով։ Դիքազդաբար այս անգամ ալ, ինչպէս միշտ, մեր հարուստ ջոջ-աղանեաներ դասակարգն էր, որ կը փայլէր իր դատապարտելի բացակայութեամբ։

Հանդէսի բացումը կատարեց Տարօնի առաջնորդ Ներսէս եպ. Խարախանեան, և յետոյ սկսան առաջ պատշաճի ճառերը, երգեցողութիւններն և բանախօսութիւնները։ Մ. Կարապետի ժառանգաւորաց վարժարանի կողմէն՝ յատուկ հրաւէրով՝ հանդէսին կը մասնակցէին երեք գլխաւոր ուսուցիչներ՝ Մկր. Տէր-Մկրտչեան, Միհրան Տէր-Յովհաննէսեան և Մակար Խարախանեան։

Առաջին երկուքը բանախօսեցին Սահակի և Մեսրոպի կեանքին, իսկ վերջինը արտասանեց Ահարոնեանի «Յարգանք քեզ» ոտանաւորը։ Խօսեցան և ճառեցին բոլոր յարանուանական հասատատութեանց ներկայացուցիչներնը։ Ի լրումն ամենայնի հանդէսին մեծ փայլ տուաւ Վանի բողոքական միսիոնար վեր. Հ. Բ. Շրբէին, որ հազիւ մէկ օր առաջ ժամանած էր և որ խորին շնորհակալութիւն յայտնեց այդ պատեհ առթիվը ներկայացողներուն, որուն շնորհիւ այդ օր կարողացան հայ հասարակութեան լայն խաւերու հետ շփուիլ։...

Այդ օրուան հանդէսին շօշափելի արդիւնքն այն եղաւ, որ անգամ մը ևս շեշտուեցան մեր քաղաքի յարանուանական եղբայրակցութեան սերոյ և համերաշխութեան հաւատիացումները, որ մեծ կարեւորութիւն ունի՝ գէթ ներկայիս մեր հասարակական դատաբարական գործին մէջ։

Հանդէսը վերջացաւ երեկոյեան ժամը 9½-ին։ Բարոյական տպաւորութիւնը շատ քաղցր էր ժողովրդական խաւերու մէջ։

Յոբելեանական այդ մեծ տօնահանդէսը դիքազդաբար ունէ նիւթական օգնութեան գործ չկրցաւ բերել։

Թախիծ

Ց. Գ.—Հանդէսին յաջորդ օրը հեռագիր ստացուեցաւ Կ. Պոլսոյ ազգ. պատրիարքարանէն, թէ Պոլսոյ ազգ. երեսփոխանական ժողովը իր վերջնագիր նիստին մէջ որոշեր է այդ յոբելեանական տօնի առթիւ հանդէս կատարել Աշտիշատի մէջ՝ ս. Սահակ հայրապետի գերեզմանին վրայ։ Սակայն դիքազդաբար հեռագիրը չափազանց ուշ հասնելուն՝ այդ ծրագիրը անկարելի էր այլեւս գործադրել տալ։

Արդէն տեղւոյս ազգ. իշխանութիւնն առաջուց այդպէս ալ ծրագրած էր՝ վերջին տօնակատարութիւնը ընել Աշտիշատի մէջ, սակայն տեղական զանազան հանգամանքներ արգելք հանդիսացան այդ գեղեցիկ նպատակին իրագործման։

Թ.